

### ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ

#### ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ԲՆԵԱԴԱՏՈՒԹԻՒՆ և ՈՒՍՈՒԱԾՔ)

(Շարունակութիւն) \*

1.

Վ Ի Պ Ա Ս Ա Ն Ք.

2.

Առասպելական Տառք.

Արտաւազդի ընտրութեան երկուութիւնը:—Արտաւազդի առասպելը բայի Խորենացուց յիշում են նաև Եզնիկի Վարդան վարդապետ, վանական վարդապետ և Յայսմաւուրք: Ըստ Եզնիկի (եր. 104) Արդաւազդին կապած պահում են վիշապները. «Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան արարեալ են վիշապաց, կամ առնիցեն, և ոչ առձարք իբրև մարդկան են նոցա ի բնակութիւնս և ոչ զօք ի թագաւորազեաց և ի դիցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի... Այլ որպէս զաղէքսանդր խարէին դեք՝ կենդանի կայցէ... Եոյնպէս և մարտութիւնս զիւաց խարեաց զգիւցապաշտս Հայոց, թէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ զիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և ունելոց զաշխարհս, և ի սնտի յոյս կապեալ կան անհաւատք, որպէս և Հրեայք՝ որ ի զուր ակնկալութիւն կապեալ կան, թէ Գաւթի զալոց է՝ շինել զԵրուսաղէմ և ժողովել զՀրեայս, և անդ թագաւորել նմա նոցա»: Արտաւազդն այստեղ ներկայանում է իբրև թագաւորազգի կամ զիւցազն և հայերը նորան սպասում են, որ ելնէ և ափրէ աշխարհին: Այստեղ նա քարի ընտրութիւն ունի ուստի և նորան կապողները շարեն վիշապներ: Մենք տեսանք, վիպասանքի մէջ Արտաւազդ նոյնպէս թագաւորի որդի է, որ

կուռելով վիշապների դէմ՝ ներկայանում է իբրև զիւցազն:

Երկու սկզբնապէս տարբեր առասպել, վիշապների դէմ կուռողի և Մասիսի մէջ կապուած չար ոգու առասպելները միանալով վիպասանքի մէջ, ազգեւ են իրար վրայ բարի ու քաջ զիւցազն արքայորդին, որ վիպասանքի մէջ կուռում է վիշապների դէմ ստացել է չար ու նախանձոտ բնաւորութիւն. իսկ ընդհակառակն Մասիսի մէջ փակուած չար ոգին ինչպիսին է իրօք Արտաւազդ, Եզնիկի մէջ, անշուշտ ժողովրդից առած, ստացել է բարի բնաւորութիւն, քանի որ նա թագաւորացն ու զիւցազն է: Այստեղից առաջացել է կապեալ Արտաւազդի բնաւորութեան տարբերութիւնը Խորենացու (ինչպէս և միւսների) և Եզնիկի մէջ: Եզնիկի մէջ կապեալ թագաւորացն Արտաւազդի բարի բնաւորութիւնն ուրեմն աւելի նոր է և վիպասանքի առասպելի առաջին մասի ազգեցութեան տակ է առաջացած, թէպէտև աւելի շուտ է գրի առնուած: Առասպելի հնագոյն ձևի նկատմամբ շուտ գրի առնուած լինելը առանձին նշանակութիւն չունի. ճիշտ ինչպէս նորագոյն ձևագիրներն երբեմն աւելի հարազատութեամբ են պահած լինում սկզբնապիւր, այդպէս էլ նոր գրի առնուած առասպելները երբեմն աւելի մօտ են բուն առասպելին քան թէ հները: Մասիսի մէջ փակուած Արտաւազդը բուն առասպելի մէջ չար բնաւորութիւն պիտի ունենայ և ունի: Մենք այդ կրթանները իսկոյն:

Արտաւազդ դեռ կամ վիշապ:—Ըստ առասպելին երգիչների խօսքով. «վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ և զի փոխանակ եղին» (Բ. կա.): Ուրեմն նոյն իսկ վիպասանքի մէջ Արտաւազդ թագաւորի որդի Արտաւազդը, որ վիշապների դէմ կուռող զիւցազն է, համարուել է իրօք մի դեռ: Այդ մի շատ տարածուած ու հին հաւատ է, որ

1. Նիւրբերգ զեղեցիկ կերպով դասաւորուած կարեի է գտնել պ. խաչարեանի Հայոց վեպի մէջ. II. եր. 73 հան. որ ևս երեք Յայսմաւուրցից քերած է՝ Գրիգոր եղբորը: Վերական վարդ. Արեւելոցու: ևս Գրիգոր Անտապեցու:

ցարդ ևս ի թիւս այլ ազգերի կենդանի մնում է մեր ժողովրդի մէջ: Չարունք կամ զեկերը փոխում են իրենց երեխաները մարդկանց երեխաների հետ, մարդկանց երեխաները՝ զոգանում են և տեղն իրենցը դնու: Եւ եթէ մանուկ Արտաւազգին զոգացողները վիշապազունք են զոգացածի տեղն ևս վիշապան կամ վիշապ պիտի դնէին ըստ հաւատին: Արտաւազգն ուլիմն ներկայանում է իրօք իրրե վիշապ, և եթէ զե է սառած նորս համար, այդ զե բառն ևս պէտք է հասկանալ ընդհանուր իմաստով՝ իրրե չար ողի Պէտք չէ մոռանալ և այն, որ ինչպէս նկատել ենք, զե, աղնաւոր և վիշապ, ափաշա սերտ կապուած են իրար հետ և յաճախ փոխանակում են իրար:

Վիշապ Արտաւազգի առասպելը եւ համանման առասպելներ:—Արդ, այդ զե կամ վիշապ Արտաւազգը նախանձում է հօր փառքին, հայրն անիծում է նորան և նա քաջքերից բռնուելով որսի ժամանակ շղթայում է Մասիսի մէջ: Մի օր պիտի ելնէ և վերջ տայ աշխարհին, բայց զարբիներէ կռանահարութիւնից զօրանում են նորա շղթաները, որ կրճում են կամ լրջում են երկուններ:

Լեռան մէջ փակուելու այս փրկական պատմութեամբ շատ տարածուած և հին է:

Մարկոս կրակուելից: հարաւային պաւստոսներէ մեծ դիւցազն, նախանձում է զիւցազն Դուկազինչէի մեծ փառքին: Սա մեռնելիս անիծում է Մարկոսին, որ և իւր հօր անէծքի տակ է: Անէծքի հետեանքն այն է լինում, որ Մարկոսի զերեզմանի տեղն անցայտ է մնում: Բայց ուրիշ և աւելի տարածուած աւանդութեամբ՝ Մարկոն մեծ կռիւ է ունենում և երբ նա ձեռներն երկինք բարձրացրած ասում է. «Տէր Աստուած, ի՛նչ անեմ այժմ», Աստուած զթում է նորան և փակում մի այրի մէջ: Մարկոն սուրբ քարի մէջ իրած՝ քնած է, իսկ նորա Շարաց ձին մամուռն է ուտում: Սուրբ կամաց կամաց

զուրս է զայիս քարի միջից, և երբ ամբողջապէս զուրս գայ, ձին էլ մամուռն ուտէ վերջացնէ, այն ժամանակ Մարկոս կրակուելը նորից աշխարհ պիտի զուրս գայ ձիով: 1

Մհերի առասպելն աւելի ևս նման է Արտաւազգի առասպելին: Նորա բնաորութեան մէջ ևս նոյն երկուութիւնն երևում է: Բայց նա աւելի չար է քան բարի: Նորա գերբնական ծննդեան մասին մէջ ոչինչ յայտնի չէ, բայց նա հասարակ հերոս չէ, մեր արդի վէպն ամենագորիզ դիւցազն է, բնաորութեամբ դիւական, քանի որ ընկերութիւն է անում զեկերի հետ: Սա կուում է հօր հետ նախանձում է հօրը, հայրն անիծում է նորան, որ անժառանգ 2 լինի և անմահ մնայ: Սա տանջում է հօր անէծքի տակ:

Ո՛Վ, տէր Աստուած,

- Ի՛մ խօր անէծք ձի խախր ի,
- Ի՛մ միջաց էրակ քաշիր ի ...
- Ո՛Վ, Տէր Աստուած, զքիզ եմ կանչիր,
- Տիւ ընցկուն էնեա ձի ձգես Վանայ քարս 5

Եւ մհերը, ինչպէս Արտաւազգը, որսորդութեան ժամանակ փակում է վանայ քարայրի մէջ. «Իրիշկից, տեսաւ մէկ ագաւ կէրս կրխուսերս, նետանեղ առից, էղար, դիպաւ ագաւին... Ագաւ փախաւ, էնիկ ձին յիտիս կինաց, խասաւ մէկ քեար, տեսաւ, որ պեաց ի մաղազայ ի ...» Եւ Մհերը փակում է քարայրի մէջ, մինչև աշխարհի վերջը: Նրբ ցորենի հատը դառնայ մանուրի չափ, նա պիտի ելնէ և կոտորում անելով աշխարհն աւերէ կամ ինչպէս Արտաւազգը՝ «սանեղ փոխման աշխարհի», Սակայն ուրիշ աւանդութեամբ, նա այդ ժամանակ պիտի «մարտիրոսուի», այսինքն հաւատք պաշտպանելու համար նահատակ պիտի դառնայ: Ազգն ուրեմն սպասում է նորան, ինչպէս Արտաւազգին ըստ Եզնիկի, միայն ուրիշ ձևով: Արտաւազգն՝ աշխարհական հայեացքով պի-

1. E. H. Meyer, Germ. Mythologie, Die Wechselbälge, hr. 78, 117, 137 եւ յ. M. Aboghian, Der armen. Volksglaube, hr. 108:

1. Ор. Муаллоф, Ҳаъя Муромеъ и Ёої. Кіев. 1879  
 2. Արտաւազգն ևս որդի լուկի (Բ. կա.), մի գիծ որ պատմագիր կարող է վիպասանից ասած լինել:  
 3. Մ. Արեղեան, Դասիր և Մեհեր, եր. 58.  
 4. Գ. և Յովսէփեան Սասնայ ձեռ. եր. 150

տի տիրէ աշխարհին և թագաւորէ, իսկ Մհերը՝ քրիստոնէական հայեացքով պիտի նահատակուի: Եւ այս տարրերութիւնը քրիստոնէական դարերի հայոց պատմական կեանքի արդիւնք է:

Մհերի բնաւորութեան մէջ ևս այս երկուութիւնը շատ բնական է, քանի որ Մհերի առասպելը սկզբում անջատ մի բան կապուել է Սասունցոց վէպի հետ և դիւական Մհերը դարձել է ժողովրդին սիրելի դիւցազն Դաւթի որդին, ինչպէս Արտաւազդն Արտաշէսի որդին:

Աժդահակի եւ Հրուդէսի առասպելը Խորենացու մէջ տեսանք: Աժդահակը վիշապ Դահակը կամ Զոհակ, որին չար ոգին ստեղծել է մարդկային ազգը ոչնչացնելու համար, երեք գլխանի մի վիշապ է, երեք բերանով և վեց աչքով: Դիւցազն Փրեզուներ (ըստ Խորենացու Հրուդէն) յաղթում է նորան Կաւէ դարբնի օգնութեամբ և շղթայում Դրմաւենդ սարի վրայ: Նորա տրիւնը կաթկթում է գետին, երբ նա ցնցում է, երկրաշարժ է լինում: Աժդահակն այսպէս պիտի մնայ մինչև աշխարհի վերջը, երբ պիտի արձակուի և կէս օրուայ մէջ շատ շատ չարիք պիտի դործէ աշխարհում: մինչև Սամը նորան պիտի յաղթէ և ստիպէ ընդունելու ճշմարիտ հաւատը: Պարսից մատենագիրները յիշում են մի ասոն, որ կատարւում է ի յիշատակ Զոհակի շղթայուելուն և մինչև այժմ իսկ Դրմաւենդ քաղաքում ասում են, <sup>1</sup> կատարւում է այդ ասոնը: Թողնում ենք համեմատութեան բերելու յունական վիշապ Տիւփոնին, որը նոյնպէս լեռան վրայ շղթայուում է:

Գերման առասպելաբանութեան մէջ որոտմունքի աստուած Թոռը թշնամի է առհասարակ հսկաներին (Biesen) և հսկայ Լոկին (Loki), որ խորամանկ է և Ալֆի (Alf) պէս արագ կերպարանափոխ է լինում (Հմմտ. մեր վիշապների կեղծս ի կեղծս լինելը): <sup>2</sup> Եւ խար-

դաւանքով սպանում է Բալդրին և Թոռ աստուածը շղթայում է նորան ու պինդ կապում ժայռից մի քարայրի մէջ: Աստուածները նորա գլխին ամրացնում են մի թունաւոր սրգ: Երբ սրգի թոյնն ու Լորձուկը նորա երեսին է կախում նա այնպէս ցրնցւում է, որ ամբողջ երկիրը դողում է, երկրաշարժ է լինում: Լոկին այդպէս պիտի մնայ մինչև աշխարհի վերջը, երբ պիտի արձակուի և վերջ տայ աստուածներին և մարդկանց: Ուստի Սկանդինաւիայում վտանգաւոր դրութեան մէջ այժմ էլ ասում են «Լոկին ազատուել է կապանքից», իսկ գերմանացոց մէջ. «Սատանան արձակուել է»: Ուրիշ աւանդութեամբ Լոկիի անդ աստուածները շղթայած են Փենրիս գայլին (fenriswolf), որ աշխարհի կատարածին (Ragnarok) պիտի արձակուի երկինքն ու երկիրն աւերելու: <sup>1</sup>

Մեր Արտաւազգի առասպելը կապուած է մի ժողովրդական հաւատալիքի և սովորութեան հետ. Դարբնները «յաւուր միաշարժուով երիցս կամ չորիցս բախեն զսայն, զի զօրասցին ասեն, շղթայքն Արտաւազգայ»: Ինչպէս Արտաւազգի առասպելը, նոյնպէս և առասպելի հետ կապուած այս հաւատն ու սովորութիւնը բնիկ հայկական չէ: Նոյնը գտնում ենք և Գերմանացոց և ուրիշների մէջ: Մանհարդը <sup>2</sup> խօսելով Լոկիի շղթայուելու առասպելի մասին գրում է. «Զայցրուր գում Ծիրովի շատ հովիաներում դարբնները սովորութիւն ունին ասոն երեկոնները, օրուայ աշխատանքը վերջացնելուց յետոյ, երեք հարուած տալու մերկ սալին: Այս անում են, որպէս զի Լուցիֆերի <sup>3</sup> շղթաները նորից ամրանան: Որովհետև եթէ նա ազատուի ամբողջ աշխարհը կաւերէ, Տեղ անդ, օրինակ՝ Վիլլզէօնառուում այս սովորութիւնը կապուած է Կտտայի գայլի (Grimmiger Wolf) յիշողութեան հետ: Եւ ինն երկաթեայ գունդերի ե-

1. E. H. Meyer, Germ. Myth. եր. 107.  
2. Mannhardt, Germ. Mythen. եր. 86 հս. Laistner, Das Rätsel der Sphinx, II. եր. 73. հս.  
3. Lucifer անուկից են ծագած են համարում անակ Loci անուակը (E. H. Meyer, Germ. Myth. եր. 163.):

1. Fr. Spiegel, Iranische Alterthumskunde I. եր. 532 հան. Mannhardt, German. Myth. եր. 532 հան.  
2. E. H. Meyer, Germ. Mythol. եր. 86 հսն.

տեւում երեք տակ շղթայի է զարնուած և որովհետեւ շարունակ ամենայն ուժով ծիգ է թափում ազատուելու: ուստի պէտք է նորա շղթան ամրացուի: թէ չէ աշխարհն ամբողջ կաւերէ: Վարդկիրխննում նոյնպէս վերջին դարրինը որ ամենից յետոյ լծողնում է դարբնոցը կռանով մի անգամ խփում է դատարկ սալի վրայ: որպէս զի Լուցիֆերը չկարողանայ շղթան խարտել կարել: Նա շարունակ խարտում է շղթան, որ քանի գնում բարակում է: Ս. Յակոբի տօնին (յուլիսի 25) մագ է մնում որ կարուի բայց մի անգամից դարձեալ հաստանում է: Նթէ նոյն իսկ մի դարրին հին սովորութիւնը չպահէ: Լուցիֆերը ամբողջապէս կըխարտէ կրպրծնի... Սմայանդում նոյն ժողովրդական հաւատքը կայ միայն այն տարրերութեամբ որ այստեղ Լուցիֆերը ծանր շղթան ոչ թէ խարտում է: այլ իւր ծանկերով կարել աշխատում: Նոյն հաւատը կայ և այլրանոց մէջ, ստանան ամբողջ տարին աշխատում է ազատուել իւր շղթաներից: Աւագ Շարաթ օրը քիչ է մնում որ պրծնի. բայց Զատիկ առաւօտեան Փրկիչն երևում է և նորէն շղթայի զարնում սաաանային:

Յայանի է: Էմինն արդէն բերել է Վրաց գոռոզ և հպարտ Ամիրանի առասպելը: Ամիրանին Ատուած կապում է կովկասեան լեռներից մէկի մէջ երկաթի շղթաներով: «Ամիրանի սուրը մի կողմ է ընկած և միայն նորա հաւատարիմ շունն անգադար լիզում է իր տիրոջ շղթաները... Սակայն Աւագ Հինգշարթի երկրի խորքից մի ղարբին է դուրս գալիս և սաստիկ ծեծում է մաշուած շղթան մինչև որ դարձեալ ամրանում է»<sup>1</sup>:

Մեր Մհերի առասպելի հետ մեզ յայտնի չէ թէ արդեօք կապուած է դարրինների այս սովորութիւնը որ ըստ Էմինի վկայութեան, մինչև այսօր պահուած է Պարսկահայերի մէջ: Սակայն մեր Մհերի առասպելի մէջ գտնում ենք համանման առասպելների մի ուրիշ զիծ, որ չկայ Արտաւազդի առասպելի մէջ: Ըստ գերմանական առասպելին, նոյն Լուցիֆերը շղթայուած ընկած է մի

քարայրի մէջ, ինն դռան ետեւում ճակատագրի երեք աղջիկների մօտ (Schicksalsjungfrauen) և պահում է մի զանձ: Այսպէս և Մհերը փակուած է Վանայ քարում «Այդ դռնով ներսը Ճախրի ֆալակ կրդառնայ... Մհերը շարունակ անոր վրայ կրնայի երբ այդ ճախրը կրդադարի այն օր Մհեր կազատի դուրս կելլէ... Ամեն տարի Համբարձման գիշերը... Մհերի դուռը կըբացուի... ով որ ներս մտնէ, որքան ոսկի կուզէ կանէ դուրս կելլէ: Գտն զի նն աշխարհի ոսկին կուտուած է»<sup>1</sup>:

Ճախրի Փալակը իսկպէս Զարխի Փալակը բախտի ճակատագրի անիւն է: Երկնային անուի (շարխ) և մոլորակային երկնքի (Փալակ) պատկերով, մի ըմբռնում որ պարսիկներից է անցել հայերին: Բախտի կամ ճակատագրի հետ կապ ունի և Համբարձման տօնի արդի ժողովրդական հաւատալիքը<sup>2</sup>: Բայց մեզ համար հետաքրքիրն այստեղ այն է, որ Մհերի առասպելի հետ կապուած է ճակատագրի ու զանձի այս զրոյցը որ ունի գերման Լուցիֆերի առասպելը:

Բերած օրինակներով արդէն պարզուած ենք համարում որ մեր Արտաւազդի առասպելը նոյն է: ինչ որ Մհերի առասպելը և որ այդ երկուսն էլ մեր հին ու նոր պատմուածքներն են այն ընդհանուր տարածուած առասպելի որ գտնում ենք շատ աղբերի մէջ: Մենք երկար կանգ չենք առնիլ այս առասպելի ծագման և մեկնութեան մասին: Զանազան առասպելաբաններ այս կամ այն տեսակ մեկնութիւն են տուել: Մանհարգն օրինակ, այդ առասպելը բացատրում է ամպրոպի օգերեւոյթով: Պարսից Զոհակը կամ Աժի Դահական նոյն է: ինչ որ վեղայական Ահիս (Ahis Dasaka) օձը, ամպրոպի վիշապը: Նորան յողթովն ու կապողը Փրեզուն (չրուզէն), հին ձեով Թրայետաօնա նոյն է ինչ որ հնդկական Տրիտա աստուածը որ գեւերի և վիշապի գէմ կուի մէջ ինգրայի օգնականներից մէկն է: Բարայրը որի մէջ ճա-

1. Մուսնիսեան, գրոց քրոց, եր. 134.  
 2. M. Abeghian, der armen. Volksglaube, եր. 50 հս. 61 հս.:

1. Էմին, Մովս. և հայոց հին վիպեր, եր. 81.

կատարի կոյսերն են բնակում է ամառը. նոցա դանձն է արեգական ոսկին: Իսկ այդ պահպանող սատանան կամ Լուցիթերը նոյն է ինչ որ ամպն ու արեգակի փայլքը փակող վիշապը՝ Վրտրան՝ Ահին, Ածի գահական:

Մեր վիշապ կամ դե Արտաւազդն ուրեմն միեւնոյն Ածգահակն է, որով և նորա չար ու նախանձոտ բնաւորութիւնը, որ տալիս է մեզ Խորենացին «Ճշմարտեալ» պատմութեան մէջ, վիպական դիժ պէտք է համարել: Եւ այդ չար ոգին վիշապը՝ փակում է «յազատն ի վեր ի Մասիս»: որի վրայ հին ժամանակ հաւատում էին թէ վիշապներ են կենում: Այժմ էլ հաւատում են թէ այնանոց վիշապներ կան և թէ գեանի տակից լուում են այնպիսի զարհուրելի խուլ ձայներ, որ մարդ արտապատառ կարող է լինել: Արդեօք այս գիծն էլ մի մութ յիշողութիւն չէ՞ այն երկրաշարժի որ առաջանում է Լուկիի, Ածի Գահակի (Զոհակի) ցնցումից, Այդ աւելի հաւանական է թւում: Երբ տեսնում ենք Ածգահակի առասպելի մի ուրիշ դիժն ևս այժմ նոյն Մասիսի վրայ կազուած: Ըստ Խորենացու, իչպէս գիտնք, Հրուզէնն Ածգահակին կապելուց յետոյ՝ իւր անդրին հաստատում է նորա դիմաց (զինքն անդրի ընդդէմ նորա հաստատել): Իսկ մեր նոյն Մասիսի վրայ այժմ առասպելարանում են թէ այնտեղ «ուղտերի քարուն կայ քարացած և թէ ուղտապանն էլ քարացած կանգնած է»:

Թա՛ղք:— Ի՞նչ ոգիներ են վիշապ Ար-

1. Արդի գրոյցներ, որքան մեզ յայտնի է, փոքր Մասիսի մասին են: Առասպելը, հարկաւ, նկշռութեամբ կարող էր Մեծ Մասիսից փոխին անցնել: Միայն Գրիգոր Նյարեցու Յայտնաւորէի մէջ Արտաւազդի մասին յիշում է. «ի Սեւա Կեան որ է աւազ Մասիս»: Աւազ Մասիսն ըստ այսմ Սեւա մեկնութիւնն է միայն զորի կողմից: Միւս տեղերում անորոշ է յիշուած կամ միայն Մասիս կամ Ազատն Մասիս: Ազատ կոչուելը Մասիսի համար յայտնի է Անանանից (Սերեոս եր. 7. Հմեհ. Ֆերրեր, Հայկ. աշխատ. եր. 141. ծան. 1. Մարր. О первоначальном Исторіи Арменіи Аноним): Արդեօք Ազատն անունը փոքր Մասիսի համար չէ եղել, որով Ազատն Մասիս մեր համայնասպան կրիկի այժմեան ժողովրդական Սիս Մասիս և փոքր և մեծ Մասիս մեծն: Հմեհ. Գառնի ցեղի ստորին հնամեջի Ազատ կոչուելը:

տաւազդին կապողները: Եզնիկի մէջ միայն Արտաւազդին կապողները վիշապներ են: Մասիս այդ, ինչպէս նկատեցինք, առասպելի նոր ձևն է:

Ըստ Յայտնաւորէի և ըստ Վանական վարդապետի Արտաւազդին կապողները Աւտուածք են: Այս աստուածք կոչուելը, եթէ մի կողմից ցոյց է տալիս որ հեթանոսութեան ժամանակ պաշտուած էակներ են եղել Արտաւազդին կապողները, միւս կողմից ենթադրել է տալիս որ քրիստոնէութեան ժամանակ այս ընդհանուր անունը՝ աստուածք փոխանակել է բուն հեթանոսական մասնաւոր անունին: Եւ այդ անունն է քա՛ղք, որ գտնում են Խորենացու և Վարդան վարդապետի մէջ: Վերջինս գրում է. «Տեսեալ ումանց քա՛ղաց և վիշապաց տաճարս ի լերինս բարձունս և բնակութիւնս, ուր և զԱյլ. քասնոր կապեալ ունին ի Հոռմ: և զԱրտաւազդ Հայոց թագաւոր ի Մասիս. և զԵրուանդ ի գետս և ի մայլս»: Իսկ յետոյ գրում է «Բայց մոլորութիւն զիււաց խարեաց զհաւպաշտան Հայոց ի ձեռն քրմացնս որք ասէին թէ զԱրտաւազդ ոմն վիշապք արգելեալ են կենդանի ի Մասիս լեռան ի նա[և նա] ելանելոց են [է] և զայլսարհս ունելոցս: Վարդանը Արտաւազդին կապողներ է գնում նախքա՛ղք և վիշապներ, և ապա միայն վիշապներ: Բայց Վարդանի այս գրումքի համեմատութիւնը Եզնիկի վերեւում գրած հատուածի հետ ցոյց է տալիս որ նորա զլխաւոր աղբիւրն եղել է Եզնիկ: Վիշապները նա վերցրել է Եզնիկից իսկ քա՛ղքերը մի ուրիշ աղբիւրից:

Ի՞նչ ոգիներ են քա՛ղք և ի՞նչպիսի մասնորութիւն ունին.

Վարդան վարդապետի վերեւում գրած հատուածից իմանում ենք, որ քա՛ղք և վիշապք համազգի էակներ պիտի լինին, քանի որ նոյն բաներն երկուսի վրայ ևս պատմում են: Քա՛ղքերն, ինչպէս և վիշապները, բնակում են բարձր լեռների վրայ և ունին այնտեղ տաճարներ, Այնուհետև քա՛ղքերի մասին պատմում են, որ կոխներ են վա-

1 Հ. Արշակն, Հին Հայաստ. եր. 194.

բուժի որս անուժի կայերից ցորեն կրում և մառաններից զինի տանում: Սոյնը պատմում է, ինչպէս տեսել ենք, և վիշապների մասին: Այս քան նմանութիւնը Հնոց բաւական է ցոյց տալու, որ վիշապների և քաջքերի հաւատը միևնոյն բնական երևոյթից է ծագած:

Վահագնի կռուի մասին խօսելիս (եր. 151—159) տեսանք, որ վիշապ մեզնում ինչպէս և ուրիշների մէջ, պառտահողմի և փոթորկալից ամպի անձնաւորումն է: Սորա դէմ կուում է նոյն օգերևոյթի բարի անձնաւորումը՝ Ինդրան իւր օգնական Մարուտների հետ, որոնք հողմերի անձնաւորում աստուածներ են: Բացի Մարուտներից Ինդրային գործակցում են և Ռբհունները (Rbhus) որոնք Մարուտների հետ սկզբնապէս ոգիների միևնոյն խումբն են կազմում և որոնց համապատասխան են գերմանական Էլբերը (Elben):

Համեմատենք քաջքերի բնաւորութիւնը մեր հին և արդի ժողովրդական հաւատքով՝ Մարուտների, Ռբհունների, Էլբերի բնաւորութեան հետ և կրտսններք, որ մեր քաջք՝ որ նոյն ոգիներն են, ինչ որ նոքա: Սոքա յատկապէս նոյնանում են գերմանական Էլբերի հետ:

Էլբերը, ինչպէս և մեր քաջքերը, իշխում են ամբողջ բնութեան մէջ: Ուստի և նոցա մասին թէ մեր և թէ գերմանական ժողովրդի մէջ կան շատ զրոյցներ: Սոքա իրենց բնաւորութեան բոլոր նուրբ գծերով և իւրատեսակ առասպելներով ու պաշտամունքի բոլոր ձևերով հնդեւրոպական են: Էլբերի սկզբնական ծագումը, զլխաւորապէս օղային է, Կան ամպրոպի, ճողմի և ամպի Էլբեր: Առաջին երկուօրը ամպրոպի և հողմի

Էլբերը, որոնց համապատասխան են մեր քաջքերը, զլխաւորապէս արական են: Իսկ ամպի Էլբերը իգական են, կին էլբ են (Elbinnen): Սոցա համապատասխան են մեր փարիները, հին դարիկները, զլխաւորապէս ջրի (սկզբնապէս ամպի) հրեղէն աղջիկներ, Պարսից պայրիկները, հնգկաց ապսարները, որոնք ուրիշ կարգի ոգիներ են:

Էլբերը, ինչպէս և մեր քաջքերը, նայելով իրենց օղային բնութեանը, մերթ խաւար, տգեղ, մլասակար, բուռն ու չար են. մերթ լուսաւոր, գեղեցիկ, օգտակար, ծառայութեան պատրաստ և բարի: Ուստի և կոչւում են չար ըաններ (böse Dinger) և նագելներ, բարիներ (Holden, gude, hilge Hollen): Այսպէս և մեր քաջքերը կոչւում են չարք, չարունք (այլ և զրոյ, գէ, սատանայ) <sup>1</sup>, և մեզանէ շատը՝ մեզնէ աղեկներ, աղեկ մանուկ:

Էլբերին վերագրում են ամեն տեսակ մարդկային բան: Բերենք մի քանի գծեր մեր քաջքերի և գերմանական հողմի Էլբերի բնաւորութիւնից: Սոցա շունչը մարդկանց և անասուններին հիւանդութիւն է բերում: Մեղնում յատկապէս սենեակի մէջ փչող քամին և առհասարակ քամու հունչը համարում է քաջքերի շունչը: Բամուց հիւանդացող քաջքերի զարկածն է: Էլբերը շրջում են պառտահողմի մէջ կամ յարուցանում են պառտահողմ, որ նոցա անունով կոչւում է զրուտների քամի (Drutenwind): Այսպէս և մեր քաջքերը կապուած են պառտահողմի հետ, որ կոչւում է քաջքաքամի: Էլբեր և քաջքեր, երկուսն ևս մարդկանց զարնում են և մարդու խելք թօցնում, խելագարեցնում: Այդպիսիք կոչում են գերմանացոց մէջ Elbentrötsch, Elbst, Drut և չն, իսկ մեր մէջ քաջքակոխ, քաջքակալ, Սոքա երկուսն ևս, իրրե քամու ոգիներ, զոչ ու խարերայ են, — զողանում են զանազան բաներ, մոլորեցնում են մարդոց, ձանապարհից շեղում, տանում ամպի տեղեր, կամ ժայռերից ներքև զլորում և նմաններ: Եւստի մարդկանց երկխաներն ևս զողանում են և տեղն իրենցը

1. M. Abeghian Der armen Volksglaube, եր. 103 հետ. Յիսակնի, որ մեր արդի ժողովրդական հաւատի մեջ, նայելով զաւտոյն, այց ոգիներ զանազան անուններ են կրում: Սովորական է խաչ անունը, իսկ իգականների համար փարի (հին պարիկ): Սակայն երբեմն խաչ ևս փարի շփոթում են այսինքն ինչպէս փարի նաև արականների համար է գործածում, այդպէս և խաչ իգականների համար: Այնուհետև խաչերը, իրենց բնութեան շար կողմից առած կամ իրասնեւորեան ազդեցութեան օակ, կոչուում են շարի, յարուժ, գրող, դեւ նոյն իսկ ասանայ: Գերմանացոց մեջ ևս կրթեր զանազան անուններ են կրում:

1. Իրեւ շար եակներ, քէ խաչերը և քէ կրթեր հաշածում են պողպատով և կայծքարով:

գնումն իբրև հողմի ոգիներ նոքա երկուսն  
ևս գրաւիչ երաժշտութիւն ունին. և մեր ու  
գերմանացոյ մէջ ևս նոցա միշտ տեսնում  
են խմբով պարելիս երգելիս ու նուագելիս  
կամ ինչպէս ասում են հարսանիք անելիս  
Երբեմն տղամարդկանց ու կանանց խարում  
ձգում են իրենց ամբօխի — եղնաղի — մէջ  
սպանելու կամ ֆլասելու նպատակով: Բայց  
միշտ չեն ֆլասում: օգնում էլ են: Նոցա  
բնակարանները քաջքառուն: քաջարար: քաջ-  
քաճոր: գերմանացոյ մէջ Alfahölen (քաջքա-  
ճոր) — են լեռների վրայ այլերում որակից  
լուում է երգ ու երաժշտութիւն: Այդակե-  
ղից ձայն են տալիս մարդոց, երբեմն իբրև  
արձագանգ և նոցա ձայնը կոչում է քաջ-  
քաճայն նոյնպէս և գերմանների մէջ Abbleich,  
նորուեգերէն Huldreslaat: Բնակում են նաև  
աւեր աներում: աշնանն անբնակ թողած տա-  
ղաւարներում: Որս են անում նստում են  
զանազան ծառերի վրայ և այնակից զոր-  
նում մարդոց: կիւում են <sup>1</sup> կամ ծծում են  
կովերի (սկզբնապէս ամպերի կովերի) կաթը:

Թողնում ենք ուրիշ նմանութիւնները:  
Բերինք քաջքերի և էլրերի մասին պատմած  
երկու գրոյց ևս: Մի գրոյցով նոքա հրաւի-  
րում են մի տասմէր օգնելու մի ծննդկան  
քաջքի և իբրև վարձ տալիս են սոխի ու  
սխտորի կճեպներ, որ սսկի է դառնում: Նկա-  
անք որ նոցա օգային ծագման յիշողութիւն  
է նաև «քաջքը աղայ է բերում» խօսքը, որ  
ասում են անձրև և արև եկած ժամա-  
նակը: — Աւելի հետաքրքիր է մի ուրիշ գրոյց,  
որ պատմում է նաև հնդկական որհունե-  
րի մասին: Այդ գրոյցով քաջքերը գողանում  
են մի կով կամ երկնջ, մորթում ուտում  
են. և յետոյ կովի ոսկորներն ու մորթին  
սարքելով՝ կենդանացնում են: Բնութեան  
մի առասպել է այդ որ զանազան կերպով են  
մեկնում: Բաջքերը հողմի ոգիներ են: Աշնա-  
նը քամիները թւում է թէ լսվում են ամ-  
պերի կովը որովհետև ձմեռն այլ ևս անձրև  
չէ գալիս: իսկ գարնանը նոյն քամիները նորից  
բերում են կաթնատու կովը, անձրևարար  
ամպերը: <sup>2</sup>

Այսպէս մեր քաջքերն ոչ միայն իրենց  
բնութեամբ այլ և գրոյցներով նոյն են: ինչ  
որ գերման էլրերը: Իսկ էլրերին համապա-  
տասխան են: ինչպէս ասացինք հնդկական  
որհուները, որոնց անուններն անգամ նոյ-  
նացնում են: <sup>1</sup> Նկատենք նաև որ էլրերի  
բնութեան հետ կապուած է և դարբնութիւնը:  
Մոքա գարնում են Aplgeschoss, կայծակ:  
Դարբնելու աւանդութիւն մեր քաջքերի մա-  
տին յայտնի չէ մեզ: Բայց եթէ Արտաւազգին  
շղթայոյնները քաջքերն են, ուրեմն և նոքա  
հմուտ պիտի լինին գարբնելու արուեստին:  
Եւ արգեօք քաջքերի այդ գարբնելու մի նշա-  
նակը չեն կատարում մեր գարբիները կռանը  
սալին բախելով:

Մի անգամ որ մեր քաջքերը նոյն կար-  
գի ոգիներ են: ինչ որ գերման էլրերը և  
հնդկական որհուները, այն ժամանակ հաս-  
կանալի է դառնում թէ ինչու քաջքերն են  
վիշապ Արտաւազգին կապողը: Դոքա նոյն  
հողմի ոգիներն են: Մարումներ, Ռոհու-  
ներ, որոնք գործակցում են լնդրային երբ  
սա կապում է վիշապին: Բարձրագոյն էակ-  
ների, աստուածների անուններ աւելի շուտ  
են մոռացում քան ստորին կարգի ոգի-  
ներինը: Այդպէս է եղել և մեզնում: Արտա-  
ւազգին կապող ասուծու անունը մոռա-  
ցուած է, իսկ նորա գործակիցներինը պա-  
հուած է: —

Ամիրոփենք մեր եգրակացու թիւեր վիպա-  
սուների մասին: Մեր ուսումնասիրութիւնից  
հետևում է, որ Հայոց վիպասանք եղել են  
մի երգախառն պատմուածք, որի մէջ միացած  
են պատմական յիշողութիւններ, կենցաղա-  
կան գծեր և երկու տարբեր առասպել: Պատ-  
մական յիշողութիւններն են Արտաշէս Ա.,  
Արտաշէս Բ., (գուցէ և Արտաշէս Գ.), Հրա-  
դաւիղը և Տրդատ Ա. թագաւորների ժամա-  
նակից ու արարքներից: Առասպելներն են  
1 թագաւորայն Արտաւազգի կոխը վիշապ  
Արգաւանի և վիշապների գէմ ու նոցա կո-

սին. միայն սա ամպերի ուրիշ կենդանակերպ՝ Բայ է կեն-  
դանակերպ, որտեղոց յետոյ սկսեցին ու մարին սարկելով  
(Mannhardt Germ. Mythen, եր. 42 հս. 57 հս).  
1. E. H. Meyer, Germ. mythol. եր. 117 Այս  
գրից եկի վերցած և գերմանական էլրերի բնութագիրը:

1. Mannhardt, Germ. Mythen, եր. 43, 48, 58;  
2. նոյն գրոյցը պատմում են ևս գերման. Թոռի մա-

